

քայլ եւս կը համարձակինք յառաջանալ եւ հաստատել թէ նոյն իսկ Պտղոմէոսի քարտէսին ճիշդ տեղւոյն վրայ մատնանշուած կը գտնենք Դրասխանակերտի մերձաւոր՝ զուցէ անուան հնագոյն ձեւը Dranisa; Talina անունին հարաւ արեւելքը 76—77 աստիճաններու գծին վրայ. լայնութեան 43,50 (տես Պանդատեան անդ քարտէս 8, տախտ. IV): Պտղոմէոսի այս անունը կը յիշեցնէ մեզ էյլարի արձանագրութեան մէջ յիշատակուած նախահայկական Daranini (համա. նիկոլսկի վերը 34 թ. ծանօթութեան սուսերէն գործին մէջ, էջ 101—105) քաղաքին անունը, զոր Պալաթեանց վերոյիշեալ Յօդուածին մէջ (տես ծանօթ. 45) Darani = Տարօնի հետ կ'ուղէ նոյնացնել (Անդ, էջ 128), սակայն ճիշդ չէ, որովհետեւ իր սկզբունքը սխալ է, ամէն նմանահնչուն անուն անպատճառ նոյնն ըսել չէ, պէտք են միանգամայն աշխարհագրական տուեալներն ալ նոյնանալ կամ համաձայնիլ:

Strangira կամ Stranguria բառերուն gira/guria վերջաւորութիւնը պարզ աղաւաղումն է «կերտ»ին, ինչպէս շատ յաճախ կը տեսնուի Պեւտինգերեան հայ անուններու վրայ, Stran = Դրասխան ի համազօրը կը կազմէ նոյնպէս աղճատուած: Եթէ Դրասխանակերտ անունը հայ մատենագիրներու քով իսկ պէսպէս զրշութեամբ պահուած է, այսպէս Դրահանակերտ, Դրասհոնակերտ, Դասհոնակերտ, Դրասխանակերտ, ինչ կարելի չէ սպասել օտար մատենագիրներէ կամ գրիչներէ:

Այսպէս ուրեմն կը հարթուին այն դժուարութիւնները, զոր ունեցած էր Մանանդեան Արտաշատ — Strangira կայարանն հաստատելու եւ նոյնացնելու Աշտարակի հետ: Միւս կողմանէ Եղիշէէն եւ Պորենացիէն հռչակուած ու ներբողուած ամբողջ մը կը գտնէ իր տեղն ու գիրքն, իր զոյութեան իրուտունքն երկրի վրայ եւ ոչ թէ օդի մէջ:

Եղիշէի թուակարգումի համեմատ Դրասխանակերտէն յետոյ կու գան Վարդանաշատ եւ ապա ծանօթ Օշական ամբողջը: Այս վերջին բերդիս եւ Դրասխանակերտ—Աշտարակի սահմաններուն մէջ խնդրելու ենք նաեւ Վարդանաշատ տեղով ու գիրքով անծանօթ ամբողջը, որ ըստ իս Ամբերդ կամ Անրերդ հին անառիկ բերդին հետ նոյն է: Այս մասին ուրիշ առթիւ:

Հ. ՊԵՏՐՈՍ ՏԵՐ-ՊՕՂՈՍԵԱՆ

Հ Ա Ր Ս Ա Ն Ե Վ Ա Ն Թ Ե Ք Ե Ր Ո Ր Ը

Հարսանիքի սովորութիւնները ժողովրդական հաւատքի թանկագին դոհարներով հիւսուած են. լայն տեղ կը բռնէ հոն մասնաւորապէս կախարդութիւնը, որուն անմիջական առարկան է չեղոքացնել թշնամի ուժերը — զեւերն ու անոնց արբանեակները, որոնց կարգին՝ շար աչքը —, եւ հմայել բախտ ու յաջողութիւն իրադարձութեան վրայ: Դեւերու դէմ այս նախազուշութիւնը անհրաժեշտութիւն է, վասն զի այն ժամերուն Քաջքերը գերազոյն ճիշդ կը թափեն՝ մարդը սերնդագործման անատակ դարձնելու: Չար ոգիներու զոյութեան նպատակն է, ըստ հայ ժողովրդական հաւատքի, անձեռել մարդկային սեռը: Ուրիշ խօսքով՝ հայ ժողովուրդի կենսահայեցողութեամբ՝ դաւակն ու սերունդը կեանքի կուտն ու կորիզն է — գիծ մը մեր նախնիներու բնապաշտ ու ոգեպաշտ հաւատքէն: Զաւակի ու սերունդի «օրհնութիւնը» անոր տեւական մտահոգութեան նիւթն է. բնական է թէ անոր հաւատքն ալ նախ պիտի ծառայէ խորհրդապաշտ թէ կախարդական միջոցներով՝ ապահովելու «պտղելու»՝ կարողութիւնը: Յաջորդ էջերու վախճանագիր ուղեգիծն է՝ հետապնդել այդ հաւատալիքներու շարքին՝ լեզուական ազգակը:

Չար ոգիները եւ անոնց արբանեակները իրենց դաւերուն ցանցը կը հիւսեն հարսնետոր զոյգին շուրջ: Անոնցմէ խուսափելու պայման է՝ արթնութիւն եւ զգուշութիւն կախարդական հակամիջոցներով:

Դեւերու անմիջական վախճանն է հարսանեկան օրերուն՝ «կապիլ» փեսացուն, այսինքն անոր առնակախուրթիւնը, նոյնպէս նաեւ հարսնացուն՝ ամուլ դարձնելով զայն: Այդ վախճանին կը հասնին Քաջքերը առ հասարակ կախարդական միջոցներով, որոնց դէմ նոյնպէս դիւթարարձ հակամիջոցներ ազդու են: Հարսանիքի բազմօրեայ շրջանը կը բացուի հայ դաւառներու մէջ «եղ-մորթէքի» հանդէսով: Նոր Բայազէտ՝ փեսացուի տան առաջ, անասունի երեսը դէպի արեւելք դարձուցած՝ կ'ըլլայ այդ զոհազորութիւնը. զոհի արեան մէջ կը թաթախէ փեսայամայրը կղպակ մը ու կը փակէ. նոյն գործողութիւնը կ'ընէ քաւորը իր դանակով: Կղպակը կը սահէ մայրը իր մօտ ու կը բանայ թաղվերացի օրը, երբ հարսանեկան հանդէսը կ'աւարտի. իսկ դանակը

կը մնայ փեսացուի զրպանը, որ առազաստի գիշերը կը բանայ. «եթէ այդպէս չանէին՝ փեսացուին թշնամին կարող էր եկեղեցի դալ կամ պսակ գնալու միջոցին մի կողպէք կամ դանակ փակել եւ այդպիսով նորափեսին «կապ» քցել — զրկել առնակութիւնից» Ա.Չ ԺԶ. 18: Բորչալուի գիւղերը՝ գիւղական տնտեսը, Ա.Չ Թ. 227, Վարանդա՝ փեսացուի քոյրը կամ մօտիկ աղգական մը, Ա.Չ Բ. 129, ունին նոյն պարտականութիւնը՝ կղպակը արեան մէջ թաթախելու ու պահելու: Վայոց Ձոր՝ փեսացուն իր գրչահատը կ'արիւնոտէ թեթեւ վիրաւորելով եզին վիզը, յետոյ կը սրկէ անոր պոչէն մաղ մը, զոր բերանը դրած կը փակէ դանակը ու կը պահէ զրպանը մինչեւ առազաստի գիշերը, Ա.Չ ԺԳ. 152: Գողթն գաւառը՝ փեսացուն իր դանակը խաչածեւ կը քսէ եզին արեան մէջ, Ա.Չ ԺԲ. 124: Ջաւախք՝ քաւորը կը կղպէ կղպակը, իսկ փեսացուն եզին պոչէն քանի մը ձար կը պահէ դաշոյնի պատեանին մէջ, Ա.Չ Ա. 249: Երեւան՝ փեսացուն կ'արիւնոտէ կղպակը ու կու տայ մօր պահելու. Դաւալու գիւղը՝ դանակ ու մազէ լար կը թաթախեն. «Սաչիկ գիւղում մսացուի պոչից երկար մազեր իրար կապելով գօտի շինում եւ արեան մէջ թաթախելով կապում է թագաւորը իր մէջքը, անմիջապէս մարմնի վրայ, որպէս զի չար աչքը չաղղի նորա վրայ», Ա.Չ Է—Ը. 156: Փեսացուն ու քաւորը վառած մեղրամոմերով ներկայ են մսացուի մորթուելուն. փեսացուն իր դանակը կը թաթախէ արեան մէջ ու կը պահէ մինչեւ առազաստ մտնելու գիշերը, որով «բոլոր չարերը կապուած են մնում եւ ոչ ոք չի կարողանում զրկել նրան առնական զօրութիւնից» (Գանձակ), Ա.Չ Զ. 252 — քաղաքը՝ կղպակ կը թաթախուի դանակի փոխան, անդ:

Կղպակի կամ դանակի փոխան ուրիշ գիւթաբարձ միջոցներ ալ կան. Բորչալու՝ աւագադոյն ամուրին կամ փեսայամայրը եզին ժայթքող արեան մէջ կը թաթախէ կտոր մը կարմիր թել եւ խնամքով կը պահէ իր մօտ մինչեւ առազաստի գիշերը, որպէս զի փեսացուն կապ չի յնայ. ազապներէն մին արիւնով խաչ կը հանէ փեսացուի ճակատին «որ նա զերծ մնայ փորձանքներից», Ա.Չ Թ. 222: Ձոհուող եզին արիւնը չարխափան է. փեսայամայրը արիւնաթաթախ ձեռքով խաչ կը քաշէ տան դրան վրայ, որպէս զի չար աչք չղպչի, Ա.Չ ԺԶ. 18. Այլուր «չարը խափանելու նպա-

տակով էլ, փեսայի մայրը մի կտոր թել է դցում մսացուի արեան մէջ, շաղախում եւ ապա պահում մինչեւ առազաստ մտնելը» (Լոռուայ հարսանիք), Ա.Չ Գ. 331—332. հմմտ. Հոօ, 71: Պսակերթին՝ եկեղեցւոյ մուտքին առաջ մակարրաչին իր գրչահատը բացած կը սպասէ, եւ փեսացուն մտնելու պէս իսկոյն կը փակէ, որպէս զի զայն «կապ ընկնելուց» ազատէ. — եթէ նոյնը թշնամին ընէր՝ փեսացուն կապ ինկած կ'ըլլար, Ա.Չ Զ. 257:

Կապի դէմ հմայելու համար փեսացուն՝ աղգական պառաններէն մին եկեղեցւոյ մէջ պսակի ժամուն կղպակ մը երեք անգամ կը բանայ ու կը գոցէ, յետոյ փակ կը պահէ զրպանը մինչեւ առազաստի գիշերը, Ա.Չ ԺԳ. 139: Եթէ թշնամին կատարէր զայդ՝ փեսացուն կը կապուէր, Ա.Չ ԺԶ. 18:

Փեսացուն կապ կ'իյնայ նաեւ ուրիշ կախարդական գործողութիւններով. այսպէս երբ պսակի ժամուն եկեղեցւոյ կտուրը քար նետուի, Ա.Չ ԺԳ. 159: Մասնաւորապէս զգոյշ պէտք է ըլլալ, որ եկեղեցւոյ ճամբուն վրայ պսակերթին՝ փեսացուին ու հարսին միջեւ մարդ չանցնի, — «ուժերու» այդ խաչածեւումէն փեսան կապ կ'իյնայ. այդ պատճառով հարսնաքոյրը, որ հարսին հետ երկրորդ կարգի վրայ եւ անոր աջին կը յառաջանայ՝ փեսացուին զգեստը կը բռնէ, Ա.Չ ԺԳ. 159. հմմտ. Հոօ, 70: Նոյն զգուշութիւնը հարկաւոր է երբ թափօրը հարսի տունէն փեսայի տունը կ'երթայ. Ա.Չ Գ. 81: Գանձակ՝ այս զգուշութիւնը պարտք է կոնաղբերներուն, որպէս զի փեսացուն «չկապուի», Ա.Չ Զ. 257. Բուլանըխ՝ «թէ ժամ երթալու եւ թէ ժամից վերադառնալու ժամանակ հարս ու փեսան պինդ կպած կը պահեն մէկմէկու, որպէս զի թշնամի մարդիկ մէջ տեղով անցուղարձ չանեն եւ փեսան չկապեն», Ա.Չ Ե. 112—113: «Պսակ գնալու ժամանակ մակարների ամենամեծ զգուշութիւններից մէկն էւ այն պէտք է լինի, որ նրանք թագաւորի եւ հարսի արանքով թոյլ չտան մարդ անց կենալու, որովհետեւ դժբաղդութեան վատ նշան է այդ» (Լոռուայ հարսանիք), Ա.Չ Գ. 333: Տարօն նոյն պայմանով եւ կամ եթէ հարսնեւոր զոյգին միջեւ մին քար նետէ՝ թագաւորը կը կոխուի, Ա.Չ ԻԶ. 169: Ամենավտանդաւոր «կապն» այն է համարում, երբ թշնամիները յաջողեցնում են նորապսակների եկեղեցի մտնելու բոպէին նրանց երկսի արանքից մի

բուն կորեկ անց կացնել եւ ցանել հաւերին ուտելու համար: Այս ձեւով կատարուած «կապը» ոչ մի կերպով արձակել չի լինի, Հոօ, 70: Բորչալու՝ փեսացուն ու հարսը պսակի կերթան թաշկինակ մը երկու ծայրերէն բռնած, ԱՀ Թ. 233. այդ թաշկինակը կը կոչուի արարատեան բարբառով՝ «կիրաքաշի», Ամ. 343: Փեսացուի ընկերակիցները պէտք է զգուշանան, որ եկեղեցւոյ սեամքին վրայ թշնամիները թել դրած չըլլան, որպէս զի հարսնետոր զոյգին անցնելէն յետոյ՝ չհանգուցեն եւ թագաւորը չկապեն. ԱՀ ԺԲ. 129: Ամուլին եկեղեցւոյ սեամքէն անցած պահուն թշնամին «մի երկաթեայ մեխ է ցցում «չրեղի» պտուտակի վրայ, ասելով «թո՛ղ այս մեխը լինի նրանց կապը». եւ քանի այն մեխն այնտեղ ցցուած է լինում, կապը չի անցնում» Հոօ, 71: Փեսացուի գլխարկը օրհնելու պահուն պէտք է հսկեն, որ թշնամիները տան կտուրը մետաքսէ թել չհանգուցեն, որ նոյն արդիւնքը կու տար, ԱՀ ԻԶ. 166: Նաեւ պսակերթի ճամբուն վրայ եթէ թշնամին դերձան եւն հանգուցէ՝ կարող է փեսացուն կապել, Բիւրակն 1898, 667: Փեսացուն «կը կոխուի» եթէ անոր սափրուած մաղերը կոխ — կրտուին, ուստի խնամքով պէտք է ժողվել զանոնք, ԱՀ Թ. 232, տ. նաեւ Հոօ, 70:

Թագաւորին հետ «թագուհին» ալ վտանգուած է. առանձնապէս խնամք պէտք է տանի հարսնաքոյրը, որպէս զի սա չկապուի. այդ մտահոգութեամբ հարսնաքոյրը պինդ կը բռնէ հարսին ծամերը արմատէն՝ պսակի ժամուն, ԱՀ ԻԶ. 169: Հարսնացուն քառասունքակոխ կ'ըլլայ — ամուլ կը մնայ կամ գաւակները չեն ապրիր — եթէ պսակի ժամանակ քառասունքոտ մայր, նորապսակ փեսայ կամ հարս եկեղեցի մտնէ. մակարներու պաշտօնն է խափանել այդ ԱՀ ԺԳ. 159:

Եթէ զժրախտութեամբ փեսան «կապ իյնայ»՝ եկեղեցւոյ աւելը կը բերեն, նորապսակներու անկողնին տակ կը դնեն, որով կապը կը բացուի. ՀԱ Թ. 122: Վասպուրական՝ եթէ շարքերը կապ ձգած ըլլան, որով առազաստի գիշերը փեսան հեռու կենայ հարսէն՝ հրացաններ կ'արձակեն, «որպէս զի շարքերը վախենան, փախչեն ու ազատ թողնեն նորափեսային» թէ հարսնիքի ժամանակ եւ թէ առազաստ մտած պահուն նորափեսան իր բոլոր կոճակները բաց կը պահէ, փակուած կղպակն ալ զրպանը, զոր նոյն դիշերը կը բանայ, ԱՀ Ի. 160: Հարսին «եօթ-

նատակ կապը» քակելու համար՝ զայն լուացած ժամանակ տաշտին շուրջ մեղրամոմ կը վառեն եւ քողը եօթն անգամ դէպի աջ կը քաշեն, ՀԱ Ի. 161: Փեսան կապէն ազատուաւ համար յատուկ շողերաղնիք գործածական է Բուլանրիս, որուն համար հարկաւոր է խունկ եւ չիկացած երկաթ — երկուքն ալ մասնաւորապէս ազգու դեւերու վրայ, ՀԱ Ե. 162—163:

Չարը հարսանեկան օրերուն ամէն ժամ ու տեղ դարանակալ է հարսնետոր զոյգին. առանձնապէս վտանգաւոր են դռներու մուտքերը, ուր կը բնակին շար ոգիները: Անոնց շար դիտումները խափանելու համար ազապաշին ձեռքի թուրը մերկացուցած, երբեմն նաեւ պատեանով, կը դպցնէ դրան կամարակապ քարին. թուրին տակէն կը մտնէ զոյգը եկեղեցի: Նոյնը կ'ընէ ազապաշին՝ վերադարձին ամէն դրան առաջ (Նոր Բայազէտ), ԱՀ ԺԶ. 26: Սուր կրելու եւ անով նորապսակները պաշտպանելու պաշտօնը առ հասարակ կ'իյնայ քաւորին: Չարխափան արարողութիւնը կը կայանայ թուրը դրան մէջ խրելու կամ հպելու մէջ. զոյգը պէտք է տակէն անցնի. նոյն նպատակով նաեւ յաճախ խաշաձեւ դիժ մը կը քաշէ դրան գլխուն (Վայոց Ձոր), ԱՀ ԺԳ. 158: Եկեղեցի մտած կամ ելած պահուն նոյն զգուշութիւնը պէտք է ընէ քաւորը, ԱՀ Բ. 137: Բորչալու՝ խաշեղբայրը մերկացուցած թուրը ձեռքն առած՝ հարսանեկան շուին առաջ ինկած կը մտնէ թագաւորի տունը, առաստաղին սուրի հարուածներ տալով, ԱՀ Թ. 236: Նոր Բայազէտ՝ թագաւորը իր ձեռքը կ'առնէ ազապաշուի թուրը ու կը մտնէ ներս, ԱՀ ԺԶ. 27: Դրան մէջ սուր խրելու սովորութիւնը զոյութիւն ունեցած է նաեւ Վան, որպէս զի զոյգը տակէն անցնելով «շարքերի ազգեցութիւնից» ազատ մնայ: Երբ թուրքիա կ'արդիւրուի Հայերուն դէնք կրել՝ հարսնիքի համար սուրը կը վարձուի թուրք զինուորէ, որ սակայն մահմետականի վերաբերուելուն պատճառով պէտք էր օրհնուիլ: Յետոյ կը ներմուծուի ծերերու կարգադրութեամբ՝ սուրի տեղ կերսն գործածելու սովորութիւնը, որ կը պահէ «թրի մոմ» անունը, մինչեւ այդ եւս կ'անհետանայ: Վասպուրականի դիւղերը դեռ միշտ կը գործածուէր սակայն թուրը, ԱՀ Ի. 149—150:

Կախարդական գործողութիւններ իրր նախազգուշութիւն կը պահեն հարսն ու փե-

սան կապէ ու փորձանքէ : Կան նաեւ կախար-
 դական ուժերով իրեր, որոնցմով կարելի է
 սպառնալել վտանգուած ամուր : Այդպիսի
 շարփախան հմայեակ է ուրցը, որ Վաս-
 սպուրական փայտ մըն է՝ ծայրը կանանչ ու
 կարմիր բուրդ կապած, զոր «սասկի օրից
 մինչեւ առագաստի գիշերը հարս ու փեսի
 առջեւից ման էին ածում որպէս զի շար աչ-
 բերի ու շար ոգիների ազդեցութիւնը հարս ու
 փեսի փոխարէն՝ նրա վրայ անցնի», Ա.Հ Ի.
 169 : Ուրցի զարդարանքը ուրիշ գաւառներ
 աւելի ճոխ է՝ նկարագրական ազդակներով .
 անոր կոչումն ալ կը տարբերի : Բուլանըխ կը
 կոչուի ն ու ը եւ կազմուած է այսպէս .
 թղաչափ կը տախտակի վրայ 4—5 փայտէ
 թռչնակներ կ'ամրացուին՝ կաքաւ կամ ըղւը-
 նիկ (աղանիկ) կոչուած, ասոնց միջեւ գոյն-
 պոյն եռանկիւնի մանածով հիւսուած սասկ-
 ներ՝ ծայրերը թղթէ վարդերով . տախտակի
 մէջտեղը կը բարձրանայ ճիւղ մը, որուն
 ծայրը կը ցցուի ն ու ը կամ խ ն ձ ո ը .
 սասկները բոնոյ ձողիկներէն կը կախուին
 մրդերու շարաններ, գոյնպոյն բուրդերով
 զարդարուած, ՀԱ. Ե. 109 : Քաջբերունի
 Ռուսահայոց ծառը կը նկարագրէ նոյնպէս .
 գլխաւոր փայտ մը, «որի շուրջը թեք բար-
 ձրանում են ճիւղեր . սորանց եւ գլխաւոր
 փայտի վրայ շինած են խաչածեւ փայտեր,
 որոնց ծայրերում տնկում են խնձորներ :
 Գլխաւոր փայտի վերին ծայրում դրած է հո-
 ռիզոնական դիրքով խաչ, որ կոչուում է «կա-
 քաւ» եւ նորա խնձորները՝ «գլխախնձոր» :
 Բացի խնձորներից ուրցը զարդարում են նաեւ
 գոյնպոյն թելերով», Ա.Հ է—Ը . 152 : Թռչնակ-
 ներու պակասը, հակառակ որ կաքաւ անունը
 պահուած է, կ'ապացուցանէ թէ ծառը աւելի
 պարզուած ձեւ է : Վարանդա՝ ծառին վրայ
 կը դնեն խնձոր, տանձ, նուռ եւն . ծառին
 ճիւղերը կը կապուին իրարու քիչմիշ եւ սի-
 սեռ անցուցած թելերով . ծառին վրայ կու
 գայ նաեւ եփած հաւ մը . զայն փարած ժա-
 մանակ 2—4 մոմ կը վառեն . աղջիկներ կը
 սլափաւտեն ծառը . Ա.Հ Բ. 129, մինչ այլուր
 քաւորը ունի նոյն պարտականութիւնը : Վա-
 րանդա ծառ կը նուիրեն նաեւ մօտիկ ազգա-
 կանները, Ա.Հ Բ. 133 : Բորչալու, Լօռի տօ-
 նածառը կը կոչուի փոփըխ . խնձորի տեղ կա-
 բելի է հոս դնել նաեւ սերկեւիլ կամ տանձ ;
 խի չգոյութեան պարագային նաեւ ներկած
 ձու . սասկերթին կ'ընկերանայ փոփըխը,
 ինչպէս ամէն տեղ, երբ տուն կու գան՝ խաչ

եղրայրը կ'առնէ ու կը տնկէ զայն փեսային
 առաջ՝ մոմերը վառած, Ա.Հ Թ. 235—236,
 Գ. 333—334 . քաւորը կը պատցնէ ուրցը իր
 ձեռքին մէջ մինչեւ հարսնիքի փակումը,
 Ա.Հ է—Ը . 156 : Ուրցը սասկերթին կ'ընկերա-
 նայ մինչեւ եկեղեցւոյ դուռը . վերադարձին
 կը մնայ թաղաւորի տունը, եւ թաղի վերա-
 ցումէն յետոյ ազապները եւ թաղաւորը կը
 ճաշակեն ստուղները . ասկից առած «ուրց,
 ուոց կտրել», «նուռձ կտրել» հոմանիշ է
 «թաղ վերցնել», «թաղ կտրել» բացատրու-
 թիւններուն, որով հարսնիքը կը փակուէր
 փեսայի պակը հանդիսարար վերցնելով .
 ՀԲԲ : Վասպուրական այդ հանդիսութիւնը
 կը կատարուէր երբ ուոցի կանանչ կարմիր
 թելերը կը կտրէին . յետնարար եկեղեցական
 ազդեցութեամբ՝ կրօնական արարողութեան
 ձեւ առնելով՝ հարսն ու փեսան բարձի վրայ
 կը կանգնէին, գլուխ գլխու տուած, քահա-
 նան ուրար կը ձգէր անոնց վրայ, պատշաճա-
 ւոր աղօթքէ ետք կը վերցնէր ուրարը եւ
 թաղաւորի կուրծքէն խաչը կը հանէր .
 Ա.Հ Ի. 159 :

Հաւատալիքային նշանակութեան համար
 հետաքրքրական է, որ նուոց (Սարտարա-
 սլատ) կը նշանակէ «գոյնպոյն բրդէ թելե-
 րով» ու «փունջուխներով» զարդարած կանգ-
 նաչափ փայտ, որ ցցում են ուղտի համէտի
 վրայ, որպէս զի «ուղտին աչքով չտան»,
 ՀԲԲ :

Լեզուական տեսակէտէ հետաքրքրական
 պատկեր կը ներկայացնեն այս հմայեակի կո-
 չումները .

- նուռք (Մուշ, Աւրան, Սարդար ՀԲԲ, Սա-
 սուն ԳԲ, խի «նուրք», Մուշ ԳԲ) .
- նուրք (Մուշ ԳԲ), նուռձ (Բուլանըխ ՀԲԲ) .
- ուոց (Շիրակ ՀԲԲ), ուրց (Ալաշկերտ
 ՀԲԲ) .
- փոփըխ (Լօռի Ա.Հ) .
- փեսի ծառ (Բարերդ ԳԲ), ծառ, տօնա-
 ծառ Ա.Հ :

Վերջին խումբը՝ փեսի ծառ, տօնածառ,
 ծառ, այլարերութիւն է . փոփըխ (< փոփոխ)
 ժողովրդական հաւատքի կնիքը կը կրէ, որ
 կը դիտէ շարերու ուշադրութիւնը իր վրայ
 դարձնել՝ «փոխել» : Վերի կոչումներու
 մէջէն մշեցի ձեւը՝ նուռք պէտք է նախնական
 նկատենք, յատկապէս իրր գւռ . յգ . նուռ
 բառին, ուսկից նուռձ փխ . *նուոց, յգ .
 սեռ . տր .՝ անհատացած, հմմտ . նորցք :

Կը մնայ լուծել ուրց ձեւը, որ անպայման ծագած է նուրց բառէն, նախնաձայնի վտարումով — այլաձեւելու պահանջը կրօնական-նուիրական բառերու քով անսովոր չէ: Այդ այլաձեւումին նպաստած է ապահով ուրց «ծոթոր» բոյսը, որ արեւմտեան բարբառներու եւ Վանի մէջ գործածական է, փոխառնուած Կովկասեան լեզուախմբէն, ՀԱԲ Ե. 710—711. յատկանշական է որ ծոթոր եւս փոխառութիւն է ասորականէ, ՀԱԲ Գ. 803—804, հմմտ. յետոյ ուհան, իբր արարական փոխառութիւն:

Հարսանեկան կարեւոր պահպանակներէն է գունաւոր թաշկինակը, որ նոյն չափով իբր յաջողութեան հմայեակ պէտք է արժէ. նոր Բայրազտ սափրելու արարողութենէ յետոյ, որմէ ետք փեսացուն թաղաւոր կը հռչակուի, հարս մը վարդաջրով կը սրսկէ զայն մինչ երկրորդ մը կանաչ թաշկինակ մը կը կապէ անոր կուրծքին՝ աջ ուսէն ձախ անութը. այդ թաշկինակը կը կոչուի ուսկապ, ԱՀ ԺԶ. 24: Ասոր վրայ կու գայ խաչաձեւ կարմիր ուսկապ մը, զոր հարսահանէքին՝ հարս մը պարելով կը կապէ, մինչ նախապէս ուրիշ մը վարդաջրով կրկին կը սրսկէ թաղաւորը, ԱՀ ԺԶ. 25: Նկատելի է, որ թաղաւորին ու հարսին վտանգաւոր ժամերուն, այսինքն այն պահուն երբ զոյգը զարդարանքով ու զիրքով իբր սլակագու յայտնի կ'ըլլայ՝ կ'ընդունի կանանչ ու կարմիր թաշկինակները: Վայոց Ձոր՝ կանանչ թաշկինակը կ'ընդունի թաղաւորը կուրծքին՝ հինայի արարողութենէ յետոյ, երբ թաղուհին կը զգեստաւորուի. կարմիրը արդէն նախապէս կապած կ'ըլլայ, ԱՀ ԺԳ. 157: Բորչալու՝ փեսացուի քոյրը կարմիր թաշկինակը՝ ուսպանդը (գրուած ընթացիկ՝ ուսպանգ) կը կապէ եզմորթէքին, ԱՀ Թ. 227, Գ. 331 (Լօռի): Նախիջևեան՝ քահանան կ'օրհնէ հարսին ու փեսային հալաւը. «քաւորը խաչակնքում եւ վերցնում էր թաղաւորի գտակը՝ դնում նրա գլխին, յետոյ դօտին կապում եւ չուխան հազցնում. ապա իրենց տնից բերած կարմիր եւ սրանց (այսինքն փեսացուին) տանից վերցրած կանանչ կտորները խաչաձեւ կապում էր կրծքին՝ «Աստուած շնորհաւոր անի, բարի վայելում ասելով»: Այդ կանանչ-կարմիր կտորը կը կոչուէր ուսկապ «օսկապ» (տպագրական սխալով գրուած օրսակ, ԱՀ ԺԲ. 127): Ներքին Աղուլիս քահանան կը կապէ օսկապը Եկեղեցւոյ մէջ արարողութենէ յետոյ. անդ:

Նաեւ զիւղին տանտէրը կը կապէ ալ թաշկինակ մը թաղաւորի վզէն իբր նուէր, ԱՀ Ա. 156: Բորչալու՝ թաղաւորը քաւորենց տունը կ'ընդունի կարմիր ուսպանդը, զոր խաչեղբոր կինը կամ քոյրը կամ աղջիկը պարելով «մի քանի անգամ խաչաձեւ մեկնում է նրա կրծքին, ապա ձգում աջ ուսին եւ արագութեամբ հեռանում: Աղապներից մինը կապում է այս ուսպանդը միւս ուսպանդների վրայ «Աստուած շնորհաւոր անի» ասելով, ԱՀ Թ. 228: Քահանան փեսայի զգեստին հետ երկու թաշկինակ կ'օրհնէ՝ մին քաւորին, միւսը թաղաւորին համար, ԱՀ Բ. 131: Լուացուելու արարողութենէ յետոյ քաւորը կը կապէ թաշկինակ մը թաղաւորի վզէն՝ ծայրերը ազատ թողած, ԱՀ Ա. 257. պսակէն վերադարձի ճամբու վրայ նշանածներու ազգականները իրենց փեսացուներու թեւերէն կը կապեն մէյ մէկ թաշկինակ, որպէս զի զոյգին օրուան արժանանան, ԱՀ Ա. 259: Թաղաւորին սափրուելէն յետոյ «հարս ու կին» պարելով մէյմէկ ուսպանդ (ուսպանգ) կը կապեն թաղաւորի կուրծքին, որ կրնայ հասարակ կամ քաշմիրի թաշկինակ ըլլալ — քաշմիրի այծի մազէ պատրաստուած: Այսպէս ուսպանդներու թիւը կը հասնի 15—25ի. թաղաւորը անոնցմով բեռնաւոր կ'երթայ հարսնառի: Այն տեղ եւս բարեկամուհիները կը կապեն իրենց ուսպանդները անոր կուրծքին: Արարողութենէ ետք թաղաւորը կը բաժնէ զանոնք աղգական կիներուն, ԱՀ Թ. 232—233: Գանձակ՝ սկեսուրի տան առաջ բարեկամ ու աղգական կիներ հարսին զլուխը կը ծածկեն 20—40 թաշկինակներու տակ. կոնեղբայրը կը վերցնէ զանոնք ու կը կապէ մէջքին. ԱՀ Զ. 262:

Թաշկինակ կը կապուի նաեւ աղապներու գօտիէն, ԱՀ ԺԲ. 127, 128: Թաղաւորը կապել կու տայ թաշկինակ կամ երեսի սրբիշ մը աղուէսի ձիուն վզէն — աղուէսի պարտականութիւնն է առաջել միշտ հարսանեկան թափօրը, ԱՀ Է—Ը. 187: Թաշկինակի գործածութիւնը առ հասարակ ընդհանրացած է հարսանեկան արարողութիւններու մէջ. հարսի զալուստը աւետող մակարը՝ ձիու ալանջէն կապած կ'ըլլայ թաշկինակ մը (Բորչալու), ԱՀ Թ. 245: Մակար-բաշին գաւազան մը կ'ընդունի՝ ծայրը թաշկինակ կապած (Նախիջևեան), ԱՀ ԺԲ. 125, 127. — երկու պարագային ալ թաշկինակն ունի շարխափան հանգամանք. աւետարբերը կը կապէ թաշկի-

նակը իր ճամբէն վանելու համար չարը. մա-
կար-բաշին կը կրէ թաշկինակ-դրօշը հար-
սանեկան թափօրին առաջ՝ անվրաս ընելու
համար չարը: Այսպէս պսակի կ'երթան
հորսնեւորները՝ ահագին աղմուկով, հրա-
ցաններ արձակելով, պարելով եւ կաքաւե-
լով՝ «աղապ-բաշու պարզած դրօշակի առաջ-
նորդութեամբ» (Վայոց Ձոր), Ա. 2 ժ. 158:
Նոր Նախիջեւան, ուր հայ սովորութիւնները
օտարներու հետ շիտումով այնքան տուժած
են, հարսանեկան թաշկինակները պահուած
են: Պսակերթին զոյգը կը բազմի փառաշուք
կառքի մէջ. անոնց դէմ առ դէմ երկու մանչ
նստած մօմ կը բռնեն. կառապանի կողքին կը
նստի «խիտ-աղասին», որուն թեւերն ու
կուրծքը ծածկուած են «զոյնզոյն մետաքսէ
թաշկինակներով»: Թաշկինակներ կախուած
կ'ըլլան հարսանեկան շքադիր կառքերու ձիե-
րուն ականջներէն, բաշերէն ու կառապանի
թեւերէն, Ա. 2 է—Ը. 88:

Կարմիր կանանչ թաշկինակի հետ ան-
հրաժեշտ գործածութիւն ունի նարօտը, որ
կարմիր ու կանանչ թեւերէ ոլորած է. պսակի
ժամուն քահանան կը դնէ զայն փեսայի ու
հարսի վզին՝ ծայրերը հանդուցած եւ մեղ-
րամոմով ու խաչով կնքած: Նարօտը կը բա-
ւարարէ ու կը փոխանակէ նաեւ թաղը,
Ա. 2 Գ. 141: Նարօտի տակ պէտք է ժուժկալէ
նորապսակ զոյգը. Սամուէլեան, Հին Հայաս-
տանի Կուլտուրան, Ա. 235, այս տեղ պատ-
մական հեռանկարով կ'ուզէ տեսնել «մնա-
ցորդ խմբակցական ամուսնութեան, որին
մասնակից էին փեսայի աղգականներն ու ըն-
կերները»: Ժողովրդի ըմբռնողութեամբ այդ
ժուժկալութիւնը հարկաւոր է սակայն իբր
զոյնզոյն նորապսակ ամուսնու շարերու աղ-
ղեցութենէն հեռու պահելու համար: Այդ
պատճառով եւս պահանջ էր, որ նարօտը վե-
րացուէր չորեքշաբթի կամ ուրբաթ չեկած,
որոնք մասնաւորապէս նպաստաւոր են չար
զիտումներու, Ա. 2 Գ. 141: Նարօտը կը վե-
րացուէր թաղի վերացման օրը, Ա. 2 ժ. 164:

Թէ թաշկինակի եւ թէ նարօտի գոյնին
կը վերաբերի չարխափան կամ բարեհամայ
ուժը. վերջին տեսակէտը շեշտուած է ուրիշ
սովորութեան մը մէջ, որ պահուած է Չանդե-
ղուր, ուր Նաւասարդին՝ անասուններու տակ
զարի կը ցանեն եւ աղիններուն կարմիր թեւ կը
կապեն, որպէս զի «տարին առատ եւ կար-
միր օրերով» — երջանիկ լինի, Ա. 2 Գ. 112:
Նարօտը օրօրոցին կը կապեն չար աչքին դէմ,

Ա. 2 ժ. 45: Սովորաբար իբր դիւարդել գոյն
կ'արժէ կապոյտը. կապոյտ ուլունք կը գոր-
ծածուի չար աչքի դէմ, Ա. 2 Ի. 183. հար-
բուխը անցնելու համար կապոյտ լաթ կ'այրեն
ու ծուխը կը ծծեն, Ա. 2 ժ. 52: Մինչ կար-
միրն ու կանանչը կը ներկայացնեն յատկա-
պէս երիտասարդ ամուսնի բախտը. բախտը սա-
կայն չարխափան ու բարեհամայ է, Ա. 2 Ա. 353:
Կարմիր կը պատուի թերատի մեռելի դա-
ղաղը, Ա. 2 Բ. 179. կարմիր է անոր երեսփառը
Ա. 2 Գ. 103, կանանչ կամ կարմիր լաթ կը կա-
պուի փոքրատի մեռած կնոջ ծնօտին, Ա. 2 Գ.
243—244:

Թաշկինակը ունի նաեւ ուրիշ գործածու-
թիւն հարսանեկան օրերուն: Թագաւորը
զղեստաւորուելէ յետոյ մինչեւ թաղի վերա-
ցումը ձեռքէ չի թողուր զայն ու կը բռնէ
քթին «որ իբրեւ թէ դիւղում հարբուխ ցաւը
չերեւայ», Ա. 2 է—Ը. 168, ուրեմն իբր չար-
խափան, բնականաբար նախ իր անձին հա-
մար: Դեւերու նախասիրած ճամբան է մտնել
բերնէն կամ քթէն ներս՝ ներքին գործարան-
ներու վնասելու նպատակով: Սովորաբար
թաշկինակի մէջ կը գտնուի խնձոր մը, զոր
թագաւորը պսակերթին՝ «մինչեւ ժամու
դուռը բռնած կը պահէ բերանի վրայ կամ
քթի տակ» (Բուլանըխ), Ա. 2 Ե. 113: Մուշ-
Տարօն նոյնպէս քթին բռնած կ'ըլլայ խնձորը՝
թաշկինակի մէջ, մինչ աջէն աղապ-բաշին
ձեռքին ունի թուրը, ձախէն օգնականը կը
տանի նուոցը՝ իսկ քաւորը ու քահանան կ'ըն-
կերանան իրենց դէպի եկեղեցի, Ա. 2 Ի. 168:
Վասպուրական՝ քաւորէն կ'ընդունի զայն
մետաքսի թաշկինակի մէջ, սափրուելէ ետք,
«որը մեծ մասամբ բերնին դրած պահում է
հարսանիքի ամբողջ ընթացքին եւ միայն էզ
բարեւի ժամանակ — որով կը փակուի
չրջանը — քահանային տալիս», Ա. 2 Ի. 151:
Բուլանըխ՝ եկեղեցական ծիսակատարութենէ
ետք խնձորը կը փոխանակուի աւետարանով,
Ա. 2 Ե. 114: Խնձորը, իբր պտղաբերութեան
խորհրդանիշ, լայն գործածութիւն ունի հար-
սանեկան արարողութիւններու մէջ, ինչպէս
նաեւ նուրցի վրայ: Այս տեսակէտէ հե-
տաքրքրական է խնձորի մէջ մատանի,
դրամի պարգեւ խրելու սովորութիւնը,
Գ. 69:

Հայ գաւառական հարսանիքներու յատ-
կանչական են աղմուկի տեսարաններ,
որոնցմէ դօտեմարտը, «կոխը», հրացանա-
ձողութիւնները, պարը, աղմուկն ու պոռչ-

տուքը անբաժան են : Երիտասարդները միշտ
 դինուած կը մասնակցին հարսնիքի : Առ հա-
 սարակ ընդունուած է , որ այս պարագան ա-
 ուեանգման գրութենէն մնացորդ է , Սա-
 մուէլեան , ԱՀ ԺԲ . 53 : Անտարակոյս խոշոր
 չափով ճշմարտութիւն կայ հոս , բայց դժուար
 պիտի ըլլայ պնդել թէ այդ միակ ազդակն է
 եւ էր , նաեւ այն ատեն երբ ամուսնութեան
 աւելի բնականոն պայմաններ կը տիրէին , եւ
 աուեանգումը գրեթէ բացառիկ դէպքի հան-
 դամանք ունէր : Ծանրակշիռ է նկատել , որ
 հարսանեկան արարողութիւններու մէջ փե-
 սացուի դերը անհամեմատ կրական է . ան
 տեւականօրէն պաշտպանութեան կը կարօտի
 քաւորի ու իր մակարներու կողմէ . իսկ կուսի
 տեսարաններու մէջ նա իրր հաշտարար
 երեւան կ'ելլէ , համտ . ԱՀ Թ , 234 , մինչդեռ
 գլխաւոր աուեանգողի պաշտօնով իրեն պիտի
 իյնար . կոիւներու եւ դօտեմարտի մէջ մեծա-
 գոյն բաժինը : Ժողովրդական հաւատքի
 գետնի վրայ տիրող հոգեխօսութիւնը այս
 շրջանին , ինչպէս նախորդ էջերը ցոյց կու
 տան , ամուր փորձանքներէ ազատելու մտա-
 հողութիւնն է : Այս տեսակէտէ՝ սխալ պիտի
 չըլլար հոս եւս հաւատալիքային դրդապատ-
 ճառ փնտռել : Ծանօթ է թէ «սատանաները
 սաստիկ սիրում են պարել եւ շատ անգամ
 «դաւուլ դուռնա» ածողներին խափում տա-
 նում են» . կոիւր , կոխը , աղմուկը անոնց նա-
 խասիրած տարրն է , որուն մասնակցելու
 համար , ժողովրդի հաւատքով՝ կը լքեն նոյն
 իսկ իրենց սիրած խաւիժը , ԱՀ Ա . 325 :
 Հետեւապէս անտեղի չէ այս գերագոյն ուրա-
 խութեան ժամուն լայն չափով բեմադրել այդ
 աղմկալից տեսարանները , որոնք միաժամա-
 նակ կը ծառայեն դեւերը զբաղեցնելու եւ
 ասոնց ուշադրութիւնը գրաւելու նպատակին :
 Ասոր կը համապատասխանէ այն հանդա-
 մանքը , որ պարը , աղմուկն ու պայքարը իր
 բարձրակէտը կը հասնի պսակերթին , ու վե-
 րադարձին , ԱՀ ԺԶ . 26 , — վերադարձին
 «աւելի մեծ աղմուկով» ԱՀ ԺԲ . 129 — , եւ
 կը շարունակուի եկեղեցւոյ առաջ մինչ ներսը
 արարողութիւն կը կատարուի , ԱՀ ԺԶ . 26 ,
 Թ . 234 . մակարները կը դօտեմարտին պսակի
 պահուն (Դսեղ դիւղ) . — այս ժամերուն
 հարկաւոր է զբաղեցնել Քաջքերը , որոնք
 հարսին ու փեսային բացառիկ դիրքով դիւ-
 րաւ կրնան նոյնացնել զանոնք ու վնասել : —
 Դեւերը վանելու սովորական միջոց է ժո-
 ղովրդական հաւատալիքներու մէջ՝ հրացա-

նածղութիւն , աղմուկ , կոիւ , տ . համեմա-
 տական ուսումնասիրութիւն մը Samter E.,
 Geburt, Hochzeit und Tod, Leipzig 1911,
 էջ 39—65 :

Պսակերթի ու դարձի ճամբուն համար
 մասնաւոր հրահանգներ կան , որոնք չար-
 քերէն ազատելու նոյն մտահողութիւնը կը
 մատնանշեն : Եթէ հարսն ու փեսան անջատ
 կ'երթան պսակի դէպի եկեղեցի , պէտք է
 խուսափեն անցնելէ այն ուղիէն , ուսկից ան-
 ցած է միոյն թափօրը , ԱՀ ԻԶ . 169 : Հարսնա-
 բեր խումբը պէտք է դայ այնպէս «որ ճամբէն
 դճամբէն չկտրէ» , որպէս զի փեսան չկա-
 պուի : Նոյն մտահողութեամբ՝ հարսին ըն-
 կերացող կիները ուժով կը թմբացնեն անոր
 կուրծքին , երբ փեսայի թափօրին հանդիպին
 եւ կը ձայնեն երեք անգամ փեսաւերներուն՝
 «Աստուած շնորհաւոր էնէ» . այս մաղթան-
 քով կը դիտեն խափանել հանդիպումէն յան-
 գելիք կապը . Բուլանըխ , ԱՀ Ե . 112 : Չար-
 քերէն ազատելու պայման է նոյնպէս չլերա-
 դառնալ այն ուղիով , ուսկից զոյգը եկած է
 եկեղեցի , ԱՀ Թ . 235 , ԺԲ . 129 , ԺԳ . 159 ,
 ԺԶ . 26 , Ի . 155 :

Պսակի շուին յատուկ են տեղտեղ
 ծպտումներ . Բուլանըխ՝ երեխաները կ'ալիւ-
 րոտեն իրենց երեսը եւ զանազան խեղկատա-
 կութիւններով հոս ու հոն կը վազեն : «Փե-
 սայի մերձաւորներից մէկը իշու վրայ հեծցնե-
 լով՝ պոչը կու տան ձեռքը եւ չորս կողմից
 ձնթոփ եւ քարակոշտեր կու տան հա՛ կու
 տան խեղճի գլխուն ու արեւուն» ԱՀ Ե . 113 :
 Մուշ-Տարօն եւս նոյն տեսարանը տեղի կ'ու-
 նենայ . երեսները ալիւրոտած տղաքներ , մին
 իշու վրայ նստած հակառակ ուղղութեամբ ,
 պոչը ձեռքը եւն , ԱՀ ԻԶ . 170 : Այս տար-
 օրինակ տեսարաններու դիւապատիր հան-
 դամանքին համար պէտք է համեմատել Վայոց
 Ձորի տղաբերքի մէկ սովորութիւնը , ուր շար
 ոգիներու ուշադրութիւնը գրաւելու եւ զա-
 նոնք խրտչեցնելու համար՝ ծննդականի մօտ՝
 շան մէջքի կատու մը կը նստեցնեն , նախա-
 պէս բերանն ու ճիրանները կասպած , որպէս
 զի չխածնէ ու չճանկէ , եւ այդպէս կատուն
 շան վրայ հեծած կը պտտցնեն սենեակին մէջ :
 Իսկ եթէ ծննդականը ուշադնաց ըլլայ՝ հաւա-
 տալով թէ ալքերը փորը մտած են եւ լիարդը
 խլել տանիլ կը փորձեն՝ անոնց ուշադրու-
 թիւնը գրաւելու եւ դուրս հանելու համար՝
 «սկսում են դափ ու դուռնա ածել ծննդա-
 կանի մօտ» ԱՀ ԺԴ . 137 . Տեղեկագիր , 5 , 182 :

Տիրող հոգեխօսութեան համաձայն՝ ա-
մուլի սլաշտականութեան միջոց պէտք է արժէ
որոշ չափով փեսացուն ու հարսնացուն կեր-
պարանափոխելու ճիգը: Ասոր մէկ արտայայ-
տութիւնն է հինայելու սովորութիւնը: Հի-
նան փեսացուի տունէն կը դրկուի՝ հարսնա-
ցուին մասնաւոր արարողութեամբ: Գողթան
գաւառ՝ հինան կը դնեն ափսէի մէջ, մէջ-
տեղը նուս մը, վրան վառած մոմ. սանա-
մայրը կը տանի դայն թոյսաշի առաջնորդու-
թեամբ: Հինային հետ կ'երթայ՝ խոյ մը խա-
չածեւ հինայուած, հարսնացուի մօր ծծա-
գինը, գլուխ մը շաքար՝ գաղաթը մետաքսէ
թաշկինակով, ներկած ձուեր եւն: Խոնչայի
չորս կողմ կը վառեն մոմեր: Ընթրիքէն յե-
տոյ սանամայրը հինայի ափսէն գլխուն դրած
կը սարէ. իրեն կը հետեւին մի քանի արջիկ-
ներ. սարէն յետոյ կը շաղախէ հինան ու կը
դնէ «նախ հարսնացուի ձեռներին ու ոտներին
եւ ապա ներկայ եղող բոլոր աղջիկներին ու
հարսներին ձեռներին» Ա.Հ ԺԲ. 126: Վասպու-
րական «բոլոր կանայք եւս» բացի սգաւոր-
ներէ եւ սրտաւածներէ՝ հինայ կը դնեն,
Ա.Հ Ի. 151: Տարօն՝ հարսնացուի թարմ հի-
նայած ձեռքերուն կը քսեն չորս աղջիկ իրենց
ձեռքերը եւ կը փախցնեն հինան, — ապա-
հով, որպէս զի իրենք եւս արժանանան թա-
գուհոյն բախտին, — յետոյ վարպետը կրկին
կը հինայէ թագուհին, «ապա դնում են բոլոր
աղջիկներին ձեռները» Ա.Հ ԻԶ. 164: Մուշ՝
թագաւորաքոյրը եւ քաւորկինը մի քանի
հարսների եւ աղջիկներին հետ դնում են հարս-
նացուի տունը՝ իրենց հետ հինայ առած. հոն
կը լողացնեն հարսնացուն ուրիշ աղջկան մը
հետ, «որ չարքերը չխփեն, եւ սողպատ դա-
շոյն, թուր են դնում տաշտի մէջ, որպէս զի
չարքերը չհամարձակուեն մօտենալ» Ա.Հ ԻԶ.
164, յետոյ կը հինայեն: Հարսէն դուրս միւս
աղջիկները կամ հարսները հինայելու հաւա-
տալիքային դրդապատճառը՝ դեւերը պատրե-
լու ու շուարեցնելու մտահոգութիւնն է,
որուն կից՝ նաեւ խորհրդապաշտ հաւատքը,
թէ նմանողութեամբ «անբախտիները» —
ամուրիները — ըլլան բախտաւոր ու բախ-
տակից: Ասոր մէկ արտայայտութիւնն է
պսակի ժամանակ ամուրիներուն ուղղուած
մաղթանքը «տառօսը քեզ», յատկապէս թուր-
քերէն *darisi basınıza*, բառացի «կորեկը ձեր
գլխուն»: Այս մաղթանքին հաւատալիքային
կորիզն այն է, որ հարսնետան դրան առաջ՝
զոյզին գլխուն կորեկ կը թափէին: Հարս-

նեւորներու կորեկը կը բերէր ամուրիներուն
նաեւ անոնց բախտը: Հինայի պէտք է վերա-
դրել դարձեալ կախարդական ուժ, որով
կ'արդարանայ անոր լայն գործածութիւնը
հարսնիքի շրջանին ու այլուր: Գաւառներու
մէջ շատ տեղ կը հինայուի նաեւ փեսացուն,
ինչպէս Վայոց Ձոր, Ա.Հ ԺԳ. 155, Գողթան
գաւառ՝ իր մօտ աղջիկներով, Ա.Հ ԺԲ. 126,
Տարօն՝ նաեւ աղապաղաշին եւ իր «գօրքը»,
Ա.Հ ԻԶ. 164. Վասպուրական՝ փեսացուն հի-
նայ կը դնէ իր ձեռքերուն, իսկ աղապաղաշին
կը հինայէ գաւազանին ծայրը, Ա.Հ Ի. 151:

Այս հաւատալիքային հոգեխօսութեամբ
աւելի շօշափելի մեկնութիւն կը դանէ այն
պարագան, որ հարսն ու փեսան յաճախ պէտք
չէ երեւան, երբ իրենց մասին խօսք կ'ըլլայ
— հանդամանք մը, որ ընկերային կեանքի
բարեշրջումով՝ համեստութիւն կը նկատուի:
Այսպէս՝ «ամօթ ունեցող տղան» պէտք էր
թաքչել հին ատեն՝ երբ իր ամուսնութիւնը
խօսքի նիւթ էր, Ա.Հ ԺԶ. 10, եւ ամօթ կը
համարուէր երբ ամուսնացողները կը հե-
տաքրքրուէին իրենց ամուսնութեամբ, Ա.Հ
ԺԳ. 143: Փախուստի ու թաքուստի բնա-
դները դեռ պահուած են գաւառական սովո-
րութիւններու մէջ. այդ պատճառով շատ ան-
գամ հարսանեկան որոշ գործողութիւններ,
ինչպէս նշանտուք, նոր Բայազէտ, Ա.Հ ԺԶ.
127, կ'ըլլան փեսացուի բացակայութեան:
հարսնացուն եւս պէտք է մնայ ուրիշ սենեակ:
Վայոց Ձոր՝ այդ առթիւ «աղջիկը ոչ միայն
ներկայ չի լինում, այլ եւ տունը չի մնում,
գնում է մի բարեկամի տուն. բացակայ է լի-
նում նաեւ նշանադրուող երիտասարդը»: Իսկ
երկակողմանի ազգականներն ու խնամիները
կը տօնախմբեն, Ա.Հ ԺԳ. 145. բարգեաւհին՝
փեսացուն դարձեալ կը բացակայէ. անդ, 146:
Մուշ-Տարօն «հաց կտրելու» կ'երթայ փեսա-
ցուի հայրը աղջկան տունը ազգականներով,
խորոված դառով եւն, իսկ փեսացուն կը բա-
ցակայէ, Ա.Հ ԻԶ. 158: Այս սլայմաններու
տակ յաճախադէպ էր հայ հնութեան մէջ, որ
հարսն ու փեսան պսակի ժամանակ միայն՝
առաջին անգամ զիրար փոխադարձ տեսնէին,
Ա.Հ Ա. 246, ԻԶ. 157: Աւելի մեղմացած ձեւն
էր, երբ փեսացուն որոշ գործողութիւններու
եւ խնջոյքներու կարող էր մասնակցել, բայց
պէտք էր «լուս ու մունջ» նստիլ, Ա.Հ Թ. 218:
Նոր Բայազէտ՝ ընթրիքի ժամանակ գլխուն
թաշկինակ ձգած երեսը կը ծածկէին «որպէս
զի աները նրա հաց ուտելը շտեմէր» —

աների եւ աներձագի միջեւ այս գիծը առեւանդման մնացորդ պէտք է համարել, Ա.Զ. ԺԶ. 13: Հայ սովորութեան համաձայն նորահարսին պարտականութիւնն էր տարիներով գոց պահել իր երեսը օտար այր մարդու առաջ, որ որքան ալ բարոյականի խստութեան նշան է՝ կրնայ հաւատալիքային ելակէտ ունենալ:

Նորապսակներու անցքը թագաւորի տան դռնէն ծիսական արարողութիւններու հետ կապուած է, որոնց կարգին առաջին տեղը կը գրաւէ զոհագործութիւնը: Զոհագործութեան նպատակը անմիջականօրէն դիւախափան չէ: Պէտք է տեսնենք հոս աւելի զոյգին բարեյաջողութիւն ազդելու հաւատքը. հարսին առաջին «ոտնամուտը» նոր օճախէն ներս պէտք է ըլլայ առանձնապէս բարեբաստիկ, իրր խորհրդանիշ որ անոր կեանքն ու գործունէութիւնը նոր յարկի տակ պիտի ըլլայ «չնորհաւոր»: Այդ խորհրդական նշան մը չէ, այլ իսկապէս ազդու — Ժողովրդեան հաւատքով —, որով բարեյաջողութիւն կը հմայուի: Զոհագործութեան նախնական առարկաներն էին բնականաբար հին տնային աստուածութիւնները, որոնք ոգիներու կերպարանքով դեռ կ'ապրին: Բարեյաջողութեան ազդակ է նմանապէս պարզեւաստուութիւնը՝ անտարակոյս խորհրդապաշտ սկզբունքով, որ անհրաժեշտօրէն կը կատարուի թագաւորի դրան եւ առ հասարակ ամէն դռներու առաջ, ուսկից հարկ է անցնին հարս ու փեսան: Այս տեսակէտով հետաքրքրական է, որ Նախիջեւան փեսացուն նշանտուքի կ'երթայ ընկերակցութեամբ քաւորի, եւ հարսի հօր դահլիճի դռնէն ներս ոտքը չի կոխեր մինչեւ վերջինս «կատակով» այգի կամ պարտէղ մը շխտտանայ, Ա.Զ. ԺԲ. 120—121: Իրականին շատ դժուար է եւ յաճախ խարուսիկ՝ ամէն տեղ ազդակներ զանազանելը, մանաւանդ որ պարզեւարաշխութեան մէջ նաեւ տնտեսական գիծը կայ, որ հայ հարսնիքներու մէջ հեռուցեալ աւելի կը կարկատի: Դիտում չունինք այս տեղ թուելու հաւատալիքային բոլոր ազդակները, որոնք կ'ընկերանան հարսանեկան գործողութիւններու. սակայն աններելի պիտի ըլլար չի՛շել շար աչքը, որ էութեամբ դիւային է եւ կը ծառայէ ոչնչացման ծրարին: Չար աչքի բաղմապիտի ազդեցութիւնները՝ հայ Ժողովուրդը մտահոգած եւ գրազեցուցած են. անոր մտահոգութեան առարկան է նա մանաւորապէս հարսանեկան օրե-

րուն, երբ նոր տան ու կեանքի հիմը կը դրուի: Այսպէս շար աչքի դէմ ուղղուած է շատ ընդհանրացած սովորութիւնը, որուն համաձայն նորապսակ զոյգը աման մը կոտորելով դռնէն ներս պէտք է մտնէ, «որպէս զի շարին դուրսն էլ այդպէս կոտորուի»: Վասպուրական գիւղերը այդ առթիւ կը գոչեն՝ «կոտորի քեասէն, ապրի փեսէն», Ա.Զ. Ի. 156, ԺԶ. 27 եւն: Վան՝ երբ հարսանեկան չուն պսակէն ետք թագաւորի տունը կը հասնի՝ փողոցի դրան առաջ՝ զոյգի ոտքին առջեւ կը գոհեն ոչխար մը կամ դռնէ հաւ մը, գլուխը սեամքին դրած. զոհի արիւնով խաչ կը քաշեն դրան կամարակալ քարին կամ սեամքին: Թագաւորը կը կոխէ զոհի արեան մէջ ու կը մտնէ ներս. թագուհին կը հետեւի իրեն՝ ջանալով աջ ոտքը նախ դնել սեամքէն ներս. Ա.Զ. Ի. 155: Աջի գործածութիւնը հայ հարսանիքի մէջ ստէպ պահանջ է. այդպէս եզմորթէքի Ժամանակ մտացուի վրայ փեսացուն ու քաւորը աջ ոտքը պէտք է դնեն Ա.Զ. Բ. 129 եւն:

Հարսանիքի ընթացքին հաւատալիքային ազդակները լեզուական մարդի վրայ իրենց արտայայտութիւնը կը գտնեն իրր զգուշութիւն շարերու դէմ եւ բարեհմայութիւն: Վերջին ազդակը, ինչպէս կեանքի մէջ ամէն տեղ, մասնաւորապէս հարսնիքի տեւողութեան պարտաւորիչ է. այսպէս օրէնք է, որ «թէ նշանադրութեան եւ թէ հարսանիքի ընթացքում երբեք «բարի իրիկուն» չեմ ասում, այլ միշտ «բարի լոյս» (Զանգեզուր) Ա.Զ. Զ. 69, «չնայելով որ երեկոյ» է (Գողթն), Ա.Զ. ԺԲ. 120, — այդ ապահով չի դիտեր շարը խաբել, ինչպէս կը կարծէ Ա.Զ. ԺԲ. 120, այլ առաւելապէս յաջողութիւն հմայելու նպատակ ունի. առաժը կ'ըսէ՝ «առաւօտեայ շառը լաւ է, քանց իրիկուայ խէրը» էՄ. Ա. 94: Իրիկունը «բարի լոյս» մաղթելով հմայուած կ'ըլլայ դիշերուան շարաբաստիկ յատկութիւնը. այդ հարկաւոր է, վասն զի երեկոյեան ձեռնարկին յաջողութիւն չի Ժպտիր, ըստ հայկական հաւատքին՝ մութը դեւերու տարրն է:

Լեզուական հմայութիւններու կարգին հայ հարսանիքի մէջ կարեւորագոյն տեղ կը բռնէ մաղթանքը, որ ամէն բարեկամ պէտք է անվերապահ արտասանէ՝ «Աստուած չնորհաւոր ընէ»: Մաղթանք պէտք է ընկերանայ ամէն գործողութեան, որպէս զի այդ ամուլին — սերունդի հեռանկարով — իսկապէս

չնորհաւոր ըլլայ: Գոհար տողեր կան այն հոգեկիր սրտարուխ խօսքերուն մէջ, զոր մրրկած մայրական սրտեր եւ յաճախ կարծր թուող հայրենի բերաններ արտասանած են իրենց օճախէն հեռացող սրտեակի գլխուն, համտ. Ա. 2 թ. 233 եւն եւն: Աղօթքի բոյր է անոնց շունչը, բայց եւ այնպէս հաւատալիքային հիմքի վրայ, որ համոզուած է արտասանուած խօսքի մոզական ուժին: Այդ հիմքէն հասկնալի է նաեւ բնասպաշտ հողիներու սարսափը անէծքի առաջ:

Լեզուական զգուշութիւնը ի վերջոյ լայն չափով նկատելի է հարսնիքի արարողութիւններու մէջ: Եթէ կը վտանգուի թագաւորը, երբ նա ճանաչելի է, նոյնքան վտանգուած է երբ կը յիշատակուի անոր իսկական անունը. այսպէս՝ երբ նա նստած է իր աթոռը՝ մին շարամտօրէն կը պոռայ՝ «Թագաւորը թառն է», միւսները անմիջապէս կը պատասխանեն՝ «Աստուծոյ դառն է», Ա. 2 ժ. 23. այս տխրոցսով կը յուսան բնականաբար անմիաս պահել անոր ամբողջութիւնը: Թագաւորը այդ պահուն անմիջապէս ոտքի կ'ելլէ՝ ի նշան պաշտպանողականի:

Այս լեզուական զգուշութիւնը պէտք է տեսնենք արդէն աղջիկ ուղելու առաջին քայլին: Յատկանշական է, որ այս տեղ ճոխ դարձապէս են այլարանական պատկերներ, յաճախ այնքան քնքոյշ ու դեղարուեստական՝ իսաստ թէ սերունդներու բերնին մէջ կերտուած ու կոկկուած են անոնք, որոշ երկիրը ու ակնածանքով, որ կրօնական-նուիրական զգածումներու յատուկ է: Բնական է՝ հաւատալիքային աղղակին կից ընկերականն եւս իր դերն ու արտայայտութիւնն ունի հոս:

Աղջիկ ուղելու կ'երթան փեսացուի ընտանիքին կողմէ սովորաբար աղղականները, եւ առհասարակ այր մարդիկ: Դժուարին հարց է մէկ բերանով բանալ այցելութեան նպատակը, ուստի խօսակցութիւնը կը դեղերի լեռ ու ձոր մինչեւ յանդի բուն նիւթին: Պաշտօնական բացատրութիւնները, որոնք այս առթիւ կը գործածուին՝ հետաքրքրական են: Փոքրիկ քաղուածք մը հետեւեալ համադրութիւնը կը ներկայացնէ.

Օնախի պատկեր.

Եկել եմ ձեր օջախից մը բուռ հող տանեմ, ԺԳ. 114, Թ. 216: Համտ. Հարսնամօր խօսքը փեսային երբ հարսը հօրենական

տունէն կը բաժնուի. «Աստուած ձեզ հետ, բալաջան. քու իմ օջախից վեր առած մի բուռը մոխիրը անհատնում ոսկի դառնայ քեզ համար. աչքիս լիսը հանում եմ ու քեզ տալիս՝ տեսնեմ թէ ո՞նց պտիս բասլամիշ անիլ ու պահել», Ա. 2 թ. 240:

Դէ՛հ մտալ էնք էս օճախէն մին հախուռ վէղ եօր օնինք. Աստուած տայ անփոշմնելի սովտա (առեւտուր) ինի: Մեր ջհալների կապն էլ էրկան ինի. Ա. 2 Բ. 122:

Դէ մի հախուռ մոխիր է հախուռ ենք... թէ մեր երախի բախտում կայ՝ ոսկի է դառնալու, թէ չէ՝ լհայ մոխիր է, որ մոխիր է, կ'ըսէ ընկերացող կինը, Ա. 2 Ա. 7. 68—69:

Ճրագի պատկեր.

Էկել եմ ճրագիցդ ճրագ վառեմ, Ա. 2 Գ. 210, Դ. 68, համտ. ԺԳ. 144:

Եկել եմ ձեր ճրագից մին կրակ տանեմ, Ա. 2 ԺԳ. 144:

Ե՞րբ գանք ձեր բարի օջաղէն մին բարի կրակ կպցնենք, կը հարցնէ միջնորդը երբ կը տեսնէ թէ ամուսնութեան տրամադիր է աղջկան ծնողքը. Ա. 2 Գ. 211:

Մերժում.

Մեր օջախի ճրագի պատրուքը հալա չենք պատրաստել, Ա. 2 ԺԳ. 144:

Մեր օջախի ճրագը չի վառուիլ այսինչի տանը, անդ:

Քու կորցրածդ մեղանում չկայ, Ա. 2 ԺԳ. 145: Ձեր կորուստը մեր տանը չի, Ա. 2 թ. 216: Դեռ մեր աղջկայ ժամանակը հասել չի, քէ մատաղ, մէ մատն երեխայ ա, նրան ո՞նց նշանենք. Ա. 2 Թ. 216:

Երբ սակայն աղջիկը կը յիշատակուի՝ սովորաբար Աստուծոյ կամ սուրբերու անուն կապակցութեամբ կ'ըլլայ՝

Պատգամը կ'առաջարկէ՝ Գիրքոր ամի, բեր Աննիկը մարգարէից օրէնքով, 318 հայրապետաց կանոնով տուր Խաչոյենց մանչուն, Ա. 2 Ա. 235:

Ասու էամբովը ուղում ենք ձեր աղջիկը մեր այս տղին, Ա. 2 ԺԳ. 144:

Խնամախօսը՝ Աստուծոյ հրամանաւը նօզը ըք ձիր ախչիկը մեր տղին հետի, Ա. 2 ԺԲ. 120:

Մուշ՝ Հաց կտրելու ծիսակատարութեան քահանան կը հարցնէ հարսին հօր՝ «Աստուածային հրամանաւ, կանոնիւք սուրբ Հայրապետաց, քու աղջիկդ, Գիւլիգարը, տուի՞ր այս ինչ մարդու այս ինչ անուն տղային»: Ա.Հ ԻԶ. 158:

Խնամախօսութեան դացած պահուն, երբ կը մտնէ դռնէն ներս պէտք մասնաւորապէս նկատի առնուի բարեյաջողութեան ազդակը. այսպէս խնամախօսը ներս մտած պահուն կ'ըսէ.

— Էկայ հա՛, աջ ոտքս եմ քցում:

Հարսին հայրը կը պատասխանէ.

— Բարով ես եկեր ես. Աստուած խերլի անա. Ա.Հ ԺԶ. 11:

Հարսնացուի տէրը՝ փեսացուի հօր. «Զեր ոտնամուտը բարի լինի» Ա.Հ Գ. 212:

Հարսին մայրը՝ Զեր վոննը գալուքը բարի ինի. ուրախ բարեկամ ընիք, Ա.Հ Բ. 121:

Լեզուական զգուշութիւնը հարսանեկան օրերուն յանգած է կերպական արդելիքի: Փեսացուն շմատնանշելու մտահոյութիւնը կը պարտադրէ մասնաւորապէս խուսափել անոր անունը տալէ. այդ պարտականութիւնը ի դօրու է երբ հարսանեկան արարողութիւնը կը սկսի փեսացուին համար՝ սափրուելու ծիսակատարութեամբ: Փեսացուն պէտք է ածիլուի եթէ նա ածիլի կարօտ մազ ալ չունենայ կղակին վրայ, Ա.Հ Դ. 138. նաեւ անոր գլխուն մազերը պէտք են առանձին խնամքով ու հանդիսութեամբ կտրուին: «Ա.յդ ժամանակից, — որ հանդիսապէս կը սափրուի — նորափեսային անուանում են թագաւոր» Ա.Հ Է—Ը. 162, ԺԶ. 23: Այս անունը հետեւապէս սափրուելու արարողութենէ յետոյ միայն ուղիղ է գործածել, եւ անոր ընդհանրացումը — եթէ հայկական գաւառներու մէջ եւս եղած է — պարզապէս հաւատալիքային ազդակի տկարացումով կամ անգիտացումով պէտք է մեկնել: Փեսացուն «թագաւոր» մեփէ կ'անուանուի նաեւ վրացերէնի մէջ, ինչպէս գաւառ. ուսերէն՝ КНЯЗЬ «իշխան», 2. նորափեսայ», ՀԱԲ Բ. 1074—1075, ինչ որ հասարակաց գիծ մը կը մատնանշէ: Հայկական յորջորջումը հիմնուած է գործնականին անով որ փեսան ըստ հայկական սովորութեան «թագ» կը կրէ արարողութեան ժամանակ: Մեր գաւառականներէն ոմանք սակայն արդէն կը զանազանեն՝

Պետութեան զուլա	Նորափեսայ
Զէյթուն՝ թագ՝ովիւր	Թագվիւր, Թագվիւր
Ազուլիս՝ թագավօ՛ր	Թըգ՛ըվիւր, Թըգ՛ավիւր
Հաճըն՝ թագավոյ	դ՛ագ՛ոյ

Թէ ո՛րքան լուրջ էր այս անուանափոխութեան պարազան այն տեղ ուր դեռ հին հայկական սովորութիւնները համեմատաբար մաքուր մնացած էին, կ'ապացուցէ Զէյթունցիներու վարուելակերպը, որոնք «Աինճ պատիժ կոտոն, տավոր կոտոն առնու» անոր որ թագաւորին «ուղիարդ անոնը ճիւղոյ» հարսանեկան օրերուն, Ալլահվերտեան, Ուլնիա կամ Զէյթուն, Կ. Պ. 1884, 71:

- Համառօտութիւններ.
- ՀԱԲ = Աճառեան, Հայերէն Արմատական Բառարան, Պետհրատ:
 - Ա.Հ = Ազգագրական Հանդէս, Թիֆլիս 1896—1916:
 - ՀԲԲ = Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ 1912:
 - ԳԲ = Աճառեան, Հայերէն Գաւառական Բառարան, Թիֆլիս 1913:
 - Հոօ = Ա. Ահարոնեան, Հոօ կիներ, Թիֆլիս 1897:

Հ. Պ. ԷՍԱՊԱԼԵԱՆ

ՄՈԿԱՑ, ԽԻԶԱՆԻ ԵՒ ՅԱՏԱԽԻ ՎԱՆՔԵՐԸ

(Շարունակութիւն:)

32. Ս. ՄԻՆԱՍԻ ՎԱՆՔԸ

Մոկաց գաւառին մէջ, Նանէնից կամ Առնաձորի վերեւ եղած բարձր լեռան մը ստորոտը, մէկ ժամ հեռու Յաղինէն, հիմնուած է Ս. Մինասի վանքը (Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 162): Ունի քարակերտ տաճար մը, որուն նորոգման յիշատակութիւնն է՝ «Ի թուին ՌՃԾԳ (1704) նորոգեցաւ սուրբ տաճարս կրկին (ե՞րբ շինուած եւ ե՞րբ առաջին անգամ նորոգուած), ես Խաչատուր սարկաւազս նորոգեցի զտաճարս այս ի յիշատակ ծնողացն իմոց: Ստեփաննոս... Եպիսկոպոս...: Ես Խաչիկ սարկաւազս շինեցի զկեղեցիս ի յիշատակ ծնողացն իմոց եւ կենակցին իմոյ եւ որդւոց (Բիւզանդիոն, 1903, Թ. 2199):

Նախորդին մօտ կայ հետեւեալ հնագոյն արձանադրութիւնը՝ «Յիշեցէք զմզս. Ներսէս գյուլթայ կարապետ թիւ. ՊԾԵ (1405) յիշ. ի Գրիստոս զնկզս. Եպիսկոպոս» (անդ):